

գերի սոյն խնդիրն :

— Յուշայ Երուսաղէմի Միտրանութեան վիճակն ստատիկ խառնութեան մէջ է : Մինչդեռ Կիրիլոս Պատրիարքն ձգելու և սքսորելու ժամանակ գրեթէ բոլոր Միտրանութիւնն միմարմին և մի հագի եղած էր, այժմ ընդհակառակն՝ իւրաքանչիւր միտրանական անդամ տարբեր մտածութեան և ինքնակալ կայութեան մէջ էր գլուխուի : Պրոկոպիոս ներկայ Պատրիարքն կը տեսնէ իւր շուրջ բոլորքուած խառնութեան հրդէհն, բայց իւր անտարբեր բնասութեամբ դադրեա անդրդուելի կը կարծէ իւր գահն :

Յուշայ Միտրանութեան սոյն վերջին երկամեայ կեանքն, շարժումներն և յեղաշրջումներն եթէ մտադիր զննութեան առնուի, պարզապէս կը տեսնուի, որ օտար քաղաքականութիւն մի այնպիսի գերեր կը խաղայ, որ մօտէն ամենեւին չը նշմարուիր, այլ հեռեւանքներն յառաջ գալէն ըզկնի միայն կ'ուշաբերին թէ՛ ենթարկեալք և թէ՛ ակնհասեալք :

Մինչդեռ Յոյն Միտրանութիւնն երգմամբ կ'երգնուր և զինքն կը նշու վէր բնաւ երբէք բերան չ'առնուէր Կիրիլոսի անունն իբրեւ Պատրիարքի անուն, այժմ խրտումներ կը նշմարուին զԿիրիլոս վերտօին Երուսաղէմի Պատրիարքական գահն հրաւիրելու : Արդէն ոմանք դիմած են առ Կիրիլոս զժողով իրենց արարմանց վերայ եւ շատերն ևս դիմելու վերայ են : Բայց կան այնպիսիք եւս, որոց համար Կիրիլոս և Պրոկոպիոս երկրորդական բաներ են, այլ իւրաքանչիւրն ուղղակի իւր պատրիարքանալու յատակագիծն կը դէմ :

Կարող ենք տեսլ, որ Կիրիլոսի անկման ժամանակ հայրենասիրութիւնը և կրօնական անկախութեան ե-

ռանդն որոշեցի գերեսաններ ունեցաւ Յոյն Միտրանութեան մէջ, բայց երկամեայ կարճ չըջանին մէջ օտար քաղաքականութիւնն այնպիսի անգգալի կերպիւ վրդովեց և ջլատեց Միտրանութեան զօրութիւնն, որ այժմ նոյն իսկ հայրենասիրութեամբ վառուածներն յուսահատ վիճակի մէջ կը գտնուին և աւելի անձնական քան թէ միտրանական կեցութեան վերայ կը խորհին : Որչափ աշտըջութիւն և հեռատեսութիւն հարկաւոր է ներկայ ժամանակի քաղաքագիտական բաղձակերպեան ճարտարամտութեանց զոհ չը լինելու համար :

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մահտեսի Յակոբ մահտեսի Կարապետեան Կարմրակապցի նուիրած է Ս. Աթոռոյս Թանգարանին մի մագաղաթիայ գրչագիր Սաղմոս, Թուական Նրն անցայտ, յատուկ նամակաւ տեղեկագրելով, որ սոյն Սաղմոսն եղած է Արք. Փաշայի անձնական մատենագարաւ նէն, և ինքն տեսնելով զայն աճուրդի հանուած իրերուն մէջ, գնած և զրկած է Ի Ս. Աթոռոս, հետեւեալ յիշատաղրով. «Յիշատակէ այսմագաղաթ Սաղմոսս յԱնայ գիւղէն Կարմրակապցի Մահտեսի Կարապետեան, Մահտեսի Յակոբոս. զայս Ս. Երուսաղէմայ Թանգարանին շնորհեցի. ով որ ընթեռնուկամ նայելու համար ձեռք առնէ, կը պարտաւորեմ որ յիշեցէ զհոգիս իմ մէկ Հայր Բրդէ- 1874. Յուլիո 5. Ի Կոստանդնուպոլիս » :

Յատուկ շնորհակալութեան արժանի են, ինչպէս բարեպաշտ Մահտեսի Յակոբն, նայեպէս և ամեն Աղ-

գայինք, որը կը փախարկին որ և իցէ
կերպիւ յիշատակ ունենալ Ս. Երու-
սողէմի Ազգային Ս. Աթոռոյ մէջ, որ
միայն ընդհանուր Ազգի համակրու-
թեամբ կը պարծի օտարաց առջեւ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆ ՊԱՐՏՈՒՑ

Աշխատասիրութիւն

ՊԵՅՐՈՍԻ Ս. ՇԱՆՇԵԱՆՑ

Բ. ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Աթոռոյ Տպարանն սոյն ա-
մենակարեւոր հեղինակութիւնն երկ-
րորդ տպագրութեամբ ՚ի լոյս ընծա-
յելա՛մ կը մատուցանէ ընթերցասի-
րաց, մանաւանդ գործողական վարչու-
թեանց խորին ուշադրութեան, որոց
շատերուն արդէն յայտնի է առաջին
տպագրութեան ջերմ ընդունելու-
թիւնն և ստիպւած ժամանակի մէջ ըս-
տառումն:

Բարոյագիտութեան ուսումն Ազ-

գային վերաշինու թեան և գործողական
յառաջադիմութեան հիմնաքարն է,
Ահա Գրքը մի, որ իւր օրհնելի տպարու-
նակութեամբ, նիւթոց ընտիր դասաւո-
րութեամբ և դիւրիմաց բացատրու-
թեամբ կարող է ամեն հասակի համար
օգտակար լինիլ, մանաւանդ, եթէ
իբրեւ դաս աւանդուի Ազգային ընդ-
հանուր գործողաց մէջ, ինչպէս արդէն
շատերուն մէջ կ'աւանդուի:

Ս. Աթոռաներկայ տպագրութիւնն
աղքատիկ մանուկներուն անգամ դիւ-
րամատչելի ընելու համար՝ սոյն երկ-
րորդ տպագրութեան գինն իջեցու-
ցած է, որ է Վեյ Դաւէիան, և կը ծախ-
ուի ինչպէս Ս. Աթոռոյ Գրատան,
նոյնպէս և Պօլսոյ Փօխանարդարանին
մէջ, և այս անգլիկէն ուղղակի կարող
են ստանալ նաև գաւառական Ազ-
գայինք:

Թէյսիյրիմա, վէ թեսհիյի տիյը-
թէ, ճիլտի էվիլէ, ալսինքն, դիւրու-
թիւն տաճկական տիյըթէի. ըստ
բուն գրաւոր հիւման, արդի քիթա-
դէթին տաճկերէնի. վաւերացմամբ
մէարիֆի. կը ծախուի բոլոր Հայ գը-
րաւաճառաց քով:

Ի 4ին 1 քարէ արծաթի մէճիփ.